



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024
ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրախնա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնապետյան, Պիյեր Բատի

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես գեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

7

Միհրան Գալստյան

Մնալ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ

8

Լուսինե Տանաջյան

Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր

24

Սոնա Ներսիսյան

Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում

37

Սյուզաննա Բաբսեղյան

Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում

49

II. ՆԵՐԳԱՐԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

65

Գայանե Հակոբյան

«Հալեալի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել

66

Գարիկ Աթանեսյան

Առտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում

78

Արմինե Տիգրանյան

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հաղթութի շրջանի օրինակով)

89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

113

Ռուբեն Օհանջանյան

Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում

114

Լուսինե Անգելուշ

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

124

Մակիչ Վարդանյան

Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը

139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ	
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ	157
<i>Սվերլյանա Պողոսյան</i>	
Հագուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ	158
<i>Հասմիկ Աբրահամյան</i>	
<i>Ռոման Հովսեփյան</i>	
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատւոյտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)	174
V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	189
<i>Ռուբեն Կարապետյան</i>	
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը	190
<i>Նարե Գալստյան</i>	
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում	204
<i>Նելլի Խաչատրյան</i>	
<i>Սալվինե Մարկոսյան</i>	
<i>Մարիամ Հարությունյան</i>	
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա)	218
VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ	237
<i>Հռիփսիմե Ասատրյան</i>	
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ	238
VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	247
Հայկազեան հայագիտական հանդեսի 2022 տարւոան զոյգ գիրքերը	248
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	263

II

ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԼԱՆԴՇԱՖՏԸ

Արմինե Տիգրանյան

ԵՊՀ

ԱՌՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԲՈՆԻ ՏԵՂԱՅԱՆՎԱԾ ԱՐՑԱԽԱՅԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՅՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ (ԱՐՑԱԽԻ ՀԱՌՈՒԹԻ ԾՐՋԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)¹

Հոդվածն անդրադառնում է 2020 թ. 44-օրյա պատերազմի արդյունքում Արցախի Հանրության շրջանից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային իրավունքի իրացման խնդիրներին և ոչ-նյութական ժառանգության պահպանության խոչընդոտներին՝ ընդգծելով պատերազմի կործանարար ազդեցությունը բռնի տեղահանվածների մշակութային կյանքի վրա: Վերլուծությունը քննում է Հանրության շրջանից բռնի տեղահանված շուրջ 13.000 բնակչի մշակութային կյանքին մասնակցության խոչընդոտները, սեփական լանդշաֆտից, համայնքից, բնական ռեսուրսներից օտարման ու մշակութային կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների բացակայության հետևանքները, մշակութային զանազան պրակտիկաների, փառատոների, տոների, կենցաղավարման մշակույթի, ավանդույթների ու արհեստների կասեցման օրինակներն ու դրանց բնութագրերը:

Հոդվածը հիմնված է Հանրության շրջանից տեղահանված արցախահայերի հետ խորացված² և ֆոկլուս խմբային հարցազրույցների³, ինչպես նաև մշակույթի իրավունքին՝ ներառյալ մշակութային կյանքին մասնակցության իրավունքին վերաբերող միջազգային օրենքների՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի, ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի հատուկ զեկուցողի մի շարք զեկույցների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք կանոնակարգերի և տեսական նյութի ուսումնասիրության վրա՝ պարզելու Հանրության ժողովրդի մշակույթի իրավունքի սահմանափակման հիմնական խնդիրներն ու մարտահրավերները:

Հետազոտությունը բացահայտել է, որ բռնի տեղահանությամբ կասեցնելով ոչ-նյութական արժեքների վերստեղծումը, խաթարելով արցախահայերի համայնքային կյանքը՝ Ադրբեյջանն ուղիղ հարված է հասցրել նրանց մշակույթի իրավունքներին՝

- 1 Հետազոտությունն իրականացվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի (Calouste Gulbenkian Foundation) տրամադրած դրամաշնորհի՝ «44-օրյա պատերազմի արդյունքում Շուշիից և Հանրությանց բռնի տեղահանված արցախահայերի մշակութային իրավունքի իրացման և ոչ-նյութական ժառանգության պահպանության խոչընդոտները» հետազոտական ծրագրի ընդհանուր թեմայի շրջանակում:
- 2 Խորացված հարցազրույցներ ենք իրականացրել ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոցձորի, Կոտայքի և Շիրակի մարզերի տարբեր բնակավայրերում և Երևանում 2020 թ. պատերազմի արդյունքում բռնի տեղահանված շուրջ 60 հաղորդցիների հետ:
- 3 Ֆոկլուս խմբային հարցազրույցները տեղի են ունեցել Երևանում՝ «Դիզալ Արտ» և «Հանրության ստեղծագործական մանկապատանեկան կենտրոն» ՀԿ-ներում՝ Հանրության տեղահանվածների հետ:

վնասելով հավաքական ինքնությունը, շարունակականությունը: Այս հարցերի համակողմանի քննության միջոցով և միջազգային նորմերի ուսումնասիրությամբ հողվածն ընդգծում է տեղահանված բնակչության մշակութային իրավունքների և ժառանգության պաշտպանության համապարփակ ռազմավարությունների հրատապ անհրաժեշտությունը:

Հիմնաքառեր՝ Արցախ, Հաղրութ, մշակույթի իրավունք, մշակութային կյանքին մասնակցություն, բռնի տեղահանում, ոչ-կյութական մշակութային ժառանգություն, ավանդական կենսընթաց, պատերազմ:

Ներածություն

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի սանձազերծած ռազմական գործողությունների ընթացքում բազմաթիվ հարվածներ հասցվեցին Արցախի քաղաքացիական ենթակառուցվածքներին, թիրախավորվեց արցախահայերի մշակութային ժառանգությունը, և ռասայական խտրական վերաբերմունքով խախտվեցին միջազգային մի շարք օրենքներ՝ ներառյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՄԱԿ-ի, Եվրոպայի Խորհրդի կոնվենցիաներն ու Միջազգային հումանիտար իրավունքի նորմերը: 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի արդյունքում բռնի տեղահանվեց Ադրբեյջանի վերահսկողության տակ անցած՝ Շուշիի, Հաղրութի և Արցախի այլ շրջանների բնակչությունը՝ մոտավորապես 40 հազար մարդ, որից շուրջ 13.000-ը՝ Հաղրութից:

Ադրբեյջանի պետական նպատակամիտված քաղաքականության իրագործմամբ Հաղրութի ժողովուրդը անջատվեց իր սոցիալ-մշակութային արժեքներից՝ զրկվելով պատմական հայրենիքի՝ Արցախի բնության, հուշարձանների, համայնքի և մշակութային լանդշաֆտի հետ կապված գիտելիքը, սովորույթներն ու պրակտիկաները իրացնելու, վայելելու, ապագա սերունդներին փոխանցելու հնարավորությունից:

Հաղրութի շրջանի պատմական հուշարձաններից, գերեզմանոցներից բռնի հեռացումը, դրանց գոյությանը սպառնացող ուղղակի վտանգը, արդեն իսկ ոչնչացված ու պղծված ժառանգության բազմաթիվ արժեքները⁴, սեփական ինքնությամբ ապրելու անհնարինությունը անհաղթահարելի մարտահրավերներ ստեղծեցին Հաղրութի և, ընդհանուր առմամբ, Արցախի ողջ ժառանգության և կենսական նշանակության եկեղեցիների, սրբավայրերի, ուխտատեղիների հետ կապված ծեսերը, ավանդույթները, տոները կենսունակ պահելու գործընթացներում:

Բացի այդ, տեղահանության բացասական հետևանք համարվող համայնքային կյանքի կազմաքանդման գործընթացը, բնական մշակութային միջավայրից ու լանդշաֆտից հեռացումը պատճառ դարձան ոչ-կյութական ժառանգության բազմաթիվ տարրերի՝ բարբառի, ավանդական ուտեստների, արհեստների, տոների, փառատոների, համայնքային խաղերի, գյուղատնտե-

4 2020 թ. պատերազմից հետո Ադրբեյջանը ոչնչացրել է Հաղրութի ազատամարտիկների հուշարձանը, վերացրել Առաքել Գյուլի խաչքարը, աղվանական հոչակել Հաղրութի Ս. Խաչ հայկական եկեղեցին, քանդել Հաղրութի եղբայրական գերեզմանոցը և սկսել շրջանի իսլամացման մեծ ծրագիր:

սական և կենցաղավարման մշակույթի աստիճանական անհետացմանը, մշակութային ոչ-ֆորմալ կրթության կասեցմանն ու ստեղծել ինքնության ամբողջականության պահպանության համակարգային խնդիրներ: Հարկ է նշել, որ հիշյալ բոլոր գործընթացները ուղղակիորեն առնչվում են արցախահայերի մշակույթի իրավունքի իրացման խախտումների հետ:

Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման բազմավեկտոր հետևանքների պարզաբանման խնդրի առանցքում հրամայական է՝ արցախահայության իրավունքների և ժառանգության ներքին կապի ճանաչումը և դրանց փոխազդեցության ուսումնասիրությունը:

Մշակութային ժառանգությունը մշակույթի իրավունքի համակարգում

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին մշակութային ժառանգության պահպանման հայեցակարգը զգալիորեն փոխվեց՝ նյութական արժեքների պաշտպանությունից զատ պաշտպանության համակարգ ներառելով նաև ոչ-նյութական ժառանգությունը, ինչպես նաև առաջ մղելով դրանց համադրման գիտակցումը: Այս միտումն արտացոլված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. համապատասխան կոնվենցիայում⁵:

Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունված մշակութային ժառանգության 21-րդ դարի ռազմավարությունը հաստատում է այս կոնցեպտը «Մշակութային ժառանգությունը՝ ընդգրկելով նյութական և ոչ-նյութական հարթությունը, հմտությունները, «իմանալ-ինչպես»-ը, պատկերացումները, վերաբերմունքն ու այլ տարրեր, անքակտելիորեն կապված է դրա համատեքստի և այն բնական ու մշակութային միջավայրի հետ, որտեղ այն ձևավորվել է՝⁶ հայեցակարգային սահմանմամբ»: Այսպիսի մոտեցմամբ ժառանգությանը տրամադրվող պաշտպանության տիրույթում ընդգրկվում են նաև մշակութային բուն արժեքներից դուրս գտնվող երևույթներ՝ ներառելով արժեքներ, գործընթացներ և իրավունքներ⁷:

Միջազգային հանրությունը, ներառյալ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Եվրոպայի Խորհուրդը, ոչ-պետական կազմակերպություններն ու միջազգային դատարանները առաջնորդվում են ժառանգության համապարփակ հայեցակարգով, ընդգծելով ժառանգության, մշակութային, բնական լանդշաֆտի, մարդկային միջավայրի և մարդու իրավունքների փոխկապակցվածությունը, ինչպես նաև նյութական, ոչ-նյութական ասպեկտների և դրանց հետ ասոցացվող տարրերի և արժեքների սիներգետիկ միասնությունը⁸:

Այս միասնական շրջանակի ներքո Արցախի մշակութային ժառանգությունը հանդես է գալիս որպես ամբողջական համակարգ՝ հյուսված պատմության, մշակույթի, համայնքի մարդկանց ինքնության տարբեր թելերից. արցախահայերն իրենց ժառանգությամբ, համայնքի սոցիալ-մշակութային ցանցերով

5 UNESCO 2003, Preamble.

6 Council of Europe 2017, 3.

7 ICC 2021, § 15.

8 UN CESC, E/C.12/GC/21 2009.

ու հավաքական հիշողությամբ կազմում են այդ հյուսվածքի էական մասը՝ նպաստելով դրա ստեղծմանը, հարստացմանն և շարունակականությանը: Իսկ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության շարունակական ոչնչացումն ու ժողովրդի բռնի տեղահանումը խաթարում է փոխկապակցվածության այս համակարգը՝ անուղղելի վնաս հասցնելով տարածաշրջանի սոցիալական, մշակութային և բնական լանդշաֆտին:

2009 թ. ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի թիվ 21 ընդհանուր մեկնաբանության առանցքում հայտնված հիշյալ գաղափարը՝ «*Անհնար է տարանջատել ժողովրդի մշակութային ժառանգությունը հենց ժողովրդից և նրա իրավունքներից*»⁹, էականորեն փոխեց առկա մոտեցումները¹⁰՝ մշակութային ժառանգությունը կապելով դրա ստեղծման աղբյուրի՝ ժողովրդի/մարդու հետ¹¹: Ժառանգության պահպանության հայեցակարգն այսպիսով ընդունեց *մշակույթի իրավունքի մոտեցումը*՝ ուղղակի պաշտպանությունից անցում կատարելով դեպի ժառանգության պաշտպանությանը որպես *մարդու մշակութային ինքնության համար կարևոր նշանակություն ունեցող արժեք*¹²:

Սույնով մշակութային ժառանգության՝ իրավունքների վրա հիմնված մոտեցումը գերազանցեց նյութական արժեքի գաղափարին և կարևորեց անհատների և համայնքների իրավունքները պահպանության համակարգում: Այս համատեքստում ժառանգության և մշակույթի իրավունքի փոխկապակցվածության սկզբունքը թույլ տվեց մարդու մշակույթի իրավունքի պաշտպանությունը կապել ժառանգության պահպանության հետ՝ խորքային գնահատելով մշակութային կյանքին մասնակցության բացասական հետևանքները¹³:

Հետևաբար, Արցախի Հաղորդի շրջանի բնակչության տեղահանությամբ մշակութային կյանքին հասցված կործանարար հետևանքները գնահատելու համար փորձելու ենք դուրս գալ արժեքի գուտ ֆիզիկական կորստի շրջանակից՝ ընդգրկելով վերջինիս տիրույթ նաև արցախահայերի իրավունքների խախտումներն ու վնասը:

Մշակույթի իրավունքի կոնցեպտի բովանդակային քննություն

Բնականաբար, Ադրբեջանի կողմից Արցախի Հաղորդի ժողովրդի բռնի տեղահանությամբ մշակութային կյանքի խաթարման բացասական հետևանքների խորքային քննության համար անհաժեշտ է խնդրի համապարփակ վերլուծություն մշակույթի իրավունքի ուսայնակով: Այն պահանջում է հիմնարար

9 Bennouna 2016; UN HRC, A/HRC/31/59 2016, § 71.

10 UN A/HRC/14/36 2010, § 9.

11 UN A/HRC/17/38 2011, and Corr.1, § 2.

12 UN A/71/317 2016, § 16; Bennouna 2016, § 53.

13 ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի ոլորտում անկախ փորձագետ Ֆարիդա Շահիդի 2011 թ. (UN A/HRC/17/38 2011) և 2016 թ. «Մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացումը՝ որպես մարդու իրավունքների խախտում» (UN A/71/317 2016) գեկույցներում առաջին անգամ մշակույթի իրավունքը կապվեց մշակութային ժառանգությանը:

ըմբռնում մշակույթի իրավունքի բովանդակային քննությամբ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 27-րդ, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածների, ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի հատուկ զեկուցողի մի շարք զեկույցների¹⁴, և 2009 թ. ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի» կողմից ընդունված «Մշակութային կյանքին յուրաքանչյուրի մասնակցության» թիվ 21 ընդհանուր մեկնաբանության¹⁵ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք կանոնակարգերի միջոցով: Ի մասնավորի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակութային բազմազանության մասին» 2001 թ. հռչակագրի համաձայն՝ *«Մշակութային իրավունքները պաշտպանում են յուրաքանչյուր անձի և համայնքի զարգանալու, աշխարհայացքի, գոյության անհատական և համայնքային իրավունքները՝ հիմնված սեփական համոզմունքների, արժեքների, գիտելիքի, արվեստների, կյանքի ձևերի ևնի վրա»*¹⁶: Վերջինիս համաձայն՝ բոլոր մարդիկ (արցախահայերը) ունեն արտահայտվելու և ստեղծագործելու, իրենց մշակութային կյանքին մասնակցելու, իրենց մշակութային պրակտիկաները իրացնելու, իրավունքներ և ազատություններ¹⁷:

Մշակույթի իրավունքի առաջին համընդհանուր երաշխիքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ» հռչակագրի 27-րդ հոդվածն է. «*Յուրաքանչյուր որ ունի համայնքի մշակութային կյանքին ազարորեն մասնակցելու, արվեստը վայելելու, գիտական առաջընթացին և դրա օգույններին մասնակցելու իրավունք*» ամրագրումով¹⁸: Վերջինիս ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեկնաբանությունը հաստատել է, որ համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը երաշխավորում է նաև մշակութային ժառանգության հասանելիության, մշակութային պրակտիկաներին մասնակցելու և վայելելու յուրաքանչյուրի իրավունքը¹⁹: Մշակույթի իրավունքի քննության մեկ այլ առանցքային աղբյուր է՝ ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային իրավունքների» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածը, որի 1/ա կետով մշակույթի իրավունքը սահմանվում է որպես «...*յուրաքանչյուր անհատի՝ իր մշակութային կյանքին մասնակցելու իրավունք*»²⁰: Դաշնագրի մեկնաբանությամբ մշակութային կյանքին մասնակցությունը բազմաշերտ գործընթաց է, որը ներառում է փոխկապակցված բաղադրիչներ՝ մշակութային կյանքին հասանելիություն, ուղղակի մասնակցություն և ներդրման հնարավորություն²¹:

14 UN HRC, A/HRC/31/59 2016; UN HRC, A/HRC/20/26 2012; UN HRC, A/HRC/28/57 2015; UN General Assembly, A/70/279 2015; UN HRC, A/HRC/23/34 2013.

15 UN CESCR, E/C.12/GC/21 2009.

16 UNESCO 2001, Art. 5.

17 UN HRC 2010, § 7.

18 UN UDHR 1948, Art. 27.1.

19 UNESCO 2024.

20 UN CESCR, E/C.12/GC/21 2009, § 3, § 13; Bennoune 2016, § 7.

21 UN CESCR, E/C.12/GC/21 2009.

Մշակութային կյանքին *հասանելիությունը* համայնքի կենսակերպին հետևելու, մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու իրավունքն է: Ավելին, այն ներառում է սեփական մշակութային ինքնությանը համապատասխան կրթություն ստանալու իրավունքները²²: Իսկ ինչ վերաբերում է մշակութային կյանքին *մասնակցության* գործընթացին, ապա այն ներառում է յուրաքանչյուրի՝ միայնակ, կամ համայնքի հետ ազատ գործելու, իր ինքնությունն իրացնելու, հասարակության տարբեր գործընթացներին մասնակցելու, մշակութային պրակտիկաներով զբաղվելու իրավունքը: Անդրադառնալով մշակութային կյանքում *ներդրմանը*՝ նշենք, որ այն համայնքի հոգևոր, նյութական, մտավոր և զգացմունքային բարիքների ստեղծմանը ներգրավվելու և համայնքի զարգացմանը մասնակցելու իրավունքն է²³:

Տեսական նյութի հիշյալ վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ բռնի տեղահանված արցախահայերի շրջանում խախտված է մշակույթի իրավունքը, քանզի հաղորդցիները զրկված են իրենց համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունքից, հուշարձանների հետ հաղորդակցվելու, ինքնությամբ համարժեք կրթություն ստանալու, մշակութային պրակտիկաները կիրառելու, պահպանելու և սերունդներին փոխանցելու հնարավորությունից:

Համայնքային կյանքի խզումն ու վտանգված բարբառը

Հակամարտության և Ադրբեյջանի խտրական քաղաքականության արդյունքում իրենց պապենական հողերից արցախահայերի բռնի տեղահանումը հանգեցրել է մշակութային տարածքների հետ համայնքային կապերի խզմանը՝ կասեցնելով մշակութային գիտելիքների միջսերունդ փոխանցումը, արցախյան մշակութային սովորույթների և ավանդույթների բնականոն շարունակականությունը²⁴: Ուստի կարելի է նկատել, որ արցախահայերի շրջանում համայնքային կյանքի կազմաքանդումն ու քայքայումը հանգեցնում է նաև նրանց մշակութային իրավունքների ոտնահարմանը: Այն, անհատականից բացի, նաև մարդու հավաքական իրավունքն է. «*Մշակույթի իրավունքը համայնքի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու իրավունքն է*»²⁵:

Ինչպես նկատում է Քարինա Բենուին՝ «Համայնք»-ի հայեցակարգում իրավունքների համատեղ կիրառումը կարող է խթանել սոցիալական համախմբվածությունը²⁶, և հետևաբար, համայնքների կազմաքանդումը՝ սոցիալական կապերի խզումը: Այս ամենի արդյունքում ամենամեծ վտանգի առջև է կանգնում Հաղրութի բարբառը:

Հաղրութի շրջանն Արցախի մյուս շրջաններից առանձնանում էր իր ինքնատիպ լեզվամշակույթով. Հաղրութի 48 բնակավայրերից յուրաքանչյուրն

22 UN CESCR, E/C.12/GC/21 2009.

23 UN CESCR, E/C.12/GC/21 2009, § 15c; UNESCO 2001, Article 5.

24 De Feyter, Parmentier 2002, 25; Kendall 2010, 362.

25 UN HRC 2010, § 10.

26 Bennoune 2016, § 17.

ուներ իր ինքնատիպ խոսվածքը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակած ոչ-նյութական մշակութային ժառանգության էթիկական սկզբունքների համաձայն՝ լեզվի անհետացումը սպառնում է շարունակական *սրբակրիկայի* և կենդանի ժառանգության փոխանցմանը և կարող է հանգեցնել կենսական մշակութային և բնագիտական գիտելիքների կորստին²⁷:

Երբ տեղահանվում են համայնքները, այն բարբառները, որոնք մշակութային լանդշաֆտների հետ սերտ կապի մեջ էին, կորչում են՝ իրենց հետ մեկտեղ մոռացության մատնելով ժառանգության արժեքները, տեքստերը և: Այսօր Արցախի Հաղորդի շրջանի ինքնատիպ բարբառը կորստյան վտանգի տակ է, քանզի այն բառ ու բանը, որ պետք է փոխանցեին Հաղորդին բնորոշ կոլորիտն ու յուրաքանչյուր բառի մեջ թաքնված մշակույթը, փոխվում են և կորչում միջավայրի ազդեցության պատճառով:

Հատկանշական է, որ բացի բարբառից՝ Հաղորդի շրջանն առանձնանում էր նաև մարդկանց անհատական՝ *փոթ* անուններ՝ (մականուններ) տալով: Այն ինքնատիպ մշակույթ էր, որն աստիճանաբար վերանում է²⁸:

Փորձելով գնահատել բռնի տեղահանման արդյունքում Արցախի Հաղորդի ժողովրդի մշակույթի իրավունքի բազմակողմ խախտումները և, հետևաբար, մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումներն ու արգելքները՝ առերեսվում ենք մի քանի խնդիրների, որոնք ներառում են Հաղորդի փառատոների, տոների, խոհանոցային մշակույթի, ավանդույթների, արհեստների կասեցումը և: Ավելին, մշակույթի իրավունքի խախտում է նաև ընտանեկան ավանդույթների պահպանման խնդիրները, իրենց հուշարձանների և գերեզմանոցների տարածքներ մուտքի արգելքը, ուխտագնացությունների կասեցումը և հաղորդակցման անհնարինությունը:

Մշակութային փառատոների հարկադիր կասեցումը Հաղորդում

Հաղորդիների մշակույթի իրավունքը խախտվում է, երբ ոչ-նյութական ժառանգության պահպանումը խաչընդոտվում է Հաղորդում ամենամյա բնույթ ունեցող փառատոների հարկադիր կասեցմամբ՝ բացառելով արցախահայերի մասնակցությունը մշակութային միջոցառումներին, ինքնության և ժառանգության համար առանցքային համայնքային գործելակերպին:

Հիշատակման է արժանի Հաղորդի շրջանի Տողի գինու փառատոնը, որն անցկացվում էր 2014 թ. սկսած ամեն տարի սեպտեմբերին Տող բնակավայրի մելիքական ապարանքում՝ ներկայացնում էր գինեգործության հնագույն և ինքնատիպ ծիսակատարությունը՝ խաղողի ճգմում, արցախյան ավանդական ուտեստների հյուրասիրություն (Ժենգյալով հաց, լավաշ, կուրկուտ), ազգագրական պարերի, երաժշտության ներկայացում և: ²⁹: Տողում էր գտնվում

27 UNESCO 2019, 8.

28 Երևան, Հաղորդի մանկապատանեկան կենտրոն, Ֆուկուս խմբային հարցում Արցախի Հաղորդ քաղաքից տեղահանված ուսուցիչների հետ, 2023 թ. հունիս:

29 Զոհրաբ Ըոքոյան, «Տող գյուղում նշվեց «Արցախյան գինու փառատոնը» // Առավոտ, 2015, հոկտեմբերի 18. <https://www.aravot.am/2015/10/18/619981/>, դիտումը՝ 31.08.2024:

«Կատար» գինու գործարանը և խաղողի այգին³⁰: Գինու հումքը *խնդողնի* կոչվող խաղողն էր, իսկ պահպանման համար օգտագործվում էին արցախյան կաղնու փայտից պատրաստված տակառներ: Ուստի պետք է արձանագրենք, որ իսպառ վերացման եզրին են հայտնվել այն փորձն ու գիտելիքը, որ բնորոշ էր հենց արցախյան գինեգործական մշակութային լանդշաֆտին և կյանք էր հաղորդում գինեգործական ոչ-նյութական պրակտիկային: Այս փառատոների բացակայությունը ստիպել է բազմաթիվ գինեգործների, որոնք այժմ բնակվում են Հայաստանի Հանրապետությունում, կտրվել իրենց հողից ու խաղողի այգիներից: Տոդում կային շուրջ 70 գինեգործներ, ովքեր տնական գինի էին պատրաստում, և մասնակցում փառատոնին:

Գերմանացի մարդաբան Բ. Բրաուչլերի պնդմամբ՝ պատերազմների ընթացքում նյութականի վնասը շատ դեպքերում ակնհայտ և տեսանելի է, իսկ ոչ-նյութականին ընդհանրապես անհետացման վտանգի առջև է հայտնվում, և հնարավոր չէ այն գնահատել³¹: Այս իմաստով կորուստն ավելի մեծ է՝ ինքնութենական, քանզի առաջանում է նաև շարունակականության անհնարինության վտանգ, որը չէր լինի, եթե համայնքը շարունակեր իր բնականոն կենսագործունեությունը:

Արցախյան ազգային և բնության ավանդույթները հատկապես կարևորվել են Հաղորթի շրջանի Դրախտիկ գյուղում, որտեղ սկսած 2014 թ. կազմակերպվում էր թթվի փառատոնը: Մասնակցում էին շրջանի շուրջ 17 գյուղերի բնակիչներ՝ ցուցադրելով թթվի 60 և ավելի տեսակ և ընդգծելով թթվի պատրաստման յուրահատուկ մշակույթը³²: Այս ոչ-նյութական *պրակտիկան* այլևս չի կարող գոյություն ունենալ, քանզի այն մշակութային ենթահողը (տեղական հումք, բնություն, համայնքի գիտելիք), որը կար Արցախում հաղորթացու համար այլևս հասանելի չէ: Բացի այդ, այն մշակութային տարածքը, որտեղ նա մուտք գործելով՝ պետք է ստեղծեր, արարեր ու ապագա սերունդներին փոխանցեր թթվի պատրաստման ոչ-նյութական *պրակտիկան*, ներկայումս անմատչելի է:

Մինչ 2020 թ. պատերազմն ու տեղահանումը արցախահայության շրջանում կենսունակ էին ազգային-ավանդական *լախարի, կոխ, աքլորակոխի, քաշոցի, պարանի ձգում* և այլ ռազմի և համայնքային խաղերը «Գուպար» ազգային ավանդական խաղերի մրցույթ փառատոնի շնորհիվ, որն ընդգրկում էր Արցախի՝ Քաշաթաղի, Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հաղորթի, Շուշիի, Շահումյանի շրջանների 250 մասնակցի: Փառատոնն առաջին անգամ կայացել է 2020 թ. սեպտեմբերի 2-ին՝ Արցախի անկախության 29-րդ տարեդարձի օրը՝ Հաղորթի շրջանի Տոդի 18-րդ դարի արգելոց՝ Մելիքական ապարանքում:

30 ««Կատար» գինեգործարանը մնացել է թշնամու տիրապետության տակ» // Aurora news, 2020, նոյեմբերի 18. [31 Bräuchler 2012, 156:](https://www.aurorane.ws/news/2020-11-18-kataro-ginegortsarany-mnatsel-e-tshnamu-tirapetuty-an-tak,ղիտումը՝ 31.08.2024:</p>
</div>
<div data-bbox=)

32 «Արցախում կազմակերպվել է առաջին թթվի փառատոնը» // Առաջին լրատվական ալիք, 2014, հոկտեմբերի 26.

Իր ողջ պատմության ընթացքում զուտ հայկական բնակչություն, հայկական ազգային-դավանական միջավայր ունեցող³³ Հաղրութի շրջանում «Գուպար» խաղերի մրցույթը նախաձեռնել էր Հաղրութի մշակույթի և երիտասարդության բաժինը, քանզի բնակչության շրջանում ամուր էին համայնքային կապերն ու ավանդական մտածողությունը: Բռնի տեղահանված արցախահայերի հետ մեր շուրջ 60 խորացված հարցազրույցների արդյունքում պարզել ենք, որ տեղահանումից հետո հարցվածներից ոչ ոք այս խաղերը չի խաղացել:

2017 թ. սկսած ամեն տարի Հաղրութում կազմակերպվում էին «Դիզակի գույները» խորագրով նկարչական միջազգային սիմպոզիումներ, որոնց արդյունքում ստեղծվել է ավելի քան 150 կտավ³⁴: Աշխարհի տարբեր անկյուններից ժամանած արվեստագետները ծանոթանում էին Դիզակ աշխարհին և կտավների միջոցով արտահայտում Հաղրութի գյուղերի (Արփենահետիկ, Պլեթանգ, Մելիքաշեն, Ծաղկավանք, Բանաձոր, Խանձաձոր) բնության գեղեցկությունը: Սակայն 2020թ. պատերազմի պատճառով Հաղրութի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելով՝ կտավների մեծ մասը գողացվեց ու թալանվեց:

Հիշյալ փառատոները համայնքային համերաշխության, ընդհանուր արժեքներ կիսելու և փոխանակելու հնարավորություն էին՝ սերունդների միջև սերմանելով պատկանելության և նույն ավանդույթներով ապրելու զգացում: Հարկադիր տեղահանումը համայնքներին առանձնացրեց այս պրակտիկաներից՝ խաթարելով սոցիալական ցանցերը և հանգեցնելով համայնքի կենսունակության և համախմբվածության կորստին:

Խոհանոցային մշակույթի իրացման պայմանների բացակայությունը

Հաղրութի ժողովրդի ոչ-նյութական ժառանգության պահպանության և մշակույթի իրավունքի խախտում է նաև մշակութային գործունեության համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը: Այս համատեքստում մշակույթի իրավունքի իրացումը այն պայմանների պաշտպանությունն է, որոնք թույլ են տալիս մարդկանց առանց խտրականության մասնակցել և ներգրավվել մշակութային կյանքին³⁵: Խնդրի միջազգային երաշխիքներից ՄԱԿ-ի Դաշնագրին 15-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը ներկայացնում է մշակույթի իրավունքի իրացման միջավայր ստեղծելու և յուրաքանչյուրի մշակութային կյանքին մասնակցության իրավունքից օգտվելու պայմանների ապահովման անհրաժեշտությունը³⁶:

Ուստի արցախահայերի մշակույթի իրավունքի իրացման խոչընդոտները պարզաբանելիս՝ կարևոր է ընդգծել բարենպաստ պայմանների և տարրերի

33 19-րդ դարում Ռուսական կայսրության տարածքում պարբերաբար հրատարակվող և կայսրության էթնիկ կազմը, բնակավայրերը նկարագրող մատենաշարում Հաղրութ բնակավայրը նկարագրվում է որպես հայկական՝ Давидбеков 1888, 153:

34 ««Դիզակի գույները» սիմպոզիումը Հաղրութի փոխարեն անցկացվել է Ստեփանակերտում» // Panorama. am, 2021, հուլիսի 7. <https://www.panorama.am/am/news/2021/07/07/Դիզակի-գույներ-սիմպոզիում/2531529>, դիտումը՝ 09.06.2024.

35 Bennoune 2016.

36 UN CRESER 2009, § 55.

բացակայությունը, որոնք խաթարում են մշակութային գործունեության լիարժեք իրականացմանն ու իրավունքի իրացմանը: Պայմանների խոչընդոտումը հատկապես ակնառու է արցախյան ավանդական խոհանոցային սովորույթների պահպանման հարցում և նմանօրինակ *պրակտիկաներն* իրականացնելիս՝ հաշվի առնելով, որ այս ուտեստների պատրաստման շատ բաղադրիչներ մշակվել են բացառապես արցախյան բնության միջավայրում և ներկայումս անհասանելի են ՀՀ-ում: Այս խոչընդոտումը էապես ազդում է մշակույթի իրավունքի իրացման վրա մշակութային կարևոր այնպիսի *պրակտիկաներում*, ինչպիսիք են Հաղբութի ժենգյալով հացի, կուրկուտի, խաշիլի, կաճապով ապուրի, կլոր գաթայի, թթի, դոշաբի պատրաստման, թեյախմության, մեղվաբուծության և այլ մշակույթներում:

Արցախյան *ժենգյալով հացը*, որը խմորից, վայրի և մշակովի ուտելի բույսերից³⁷ պատրաստված տափակ բլիթ է, որպես ավանդական պրակտիկա անխզելիորեն կապված է Արցախի և մասնավորապես Հաղբութի բնության, մարդկանց, համայնքի և միջավայրի հետ: Հաղբութից տեղահանվածները նշել են, որ այս ուտեստի բաղադրատոմսում ներառել են 15 տեսակի կանաչի, թեն գրականության մեջ ավանդաբար օգտագործվել է շուրջ 32 բուսատեսակ³⁸: Տեղահանությունից հետո նոր միջավայրում տարբեր բույսերի ու պայմանների բացակայությունը խանգարում է այս պրակտիկայի շարունակականությանը: Ու չնայած այս ուտեստի վերստեղծման փորձերին՝ այն մնում է արցախյան հողի հետ անխզելիորեն միաձուլ *պրակտիկա* և դժվարությամբ է հարմարվում նոր միջավայրին:

Արցախի տարբեր շրջաններում ոչ-նյութական ժառանգության արժեքներից կարևոր նշանակություն ունեն *թթի մշակույթը*, քանզի Հաղբութում շատ ընտանիքներ իրենց բակում թթի ծառեր էին մշակում՝ տիրապետելով թթից ավանդական ուտեստներ պատրաստելու մեծ հմտությունների: Արցախում թութը նույնպես ընդգծված համայնքային մշակույթ էր. հարևաններով հատուկ ընթացակարգով օջախի վրա թթից պատրաստում էին նաև դոշաբ, որը համայնքային ծիսակարգ էր: Տեղահանությունից հետո, ռեսուրսների բացակայության պատճառով, արցախյան դոշաբը չի պատրաստվում՝ արցախահայերին զրկելով թե՛ այս յուրահատուկ պրակտիկայից, թե՛ դոշաբի օգտակար ու բուժիչ հատկություններով բժշկվելու հնարավորությունից:

Արցախի բնության և համայնքային կյանքի հետ էր կապված նաև թական ջորենով, խոզի կամ բադի մսով հարիսան՝ *կուրկուսը*: Հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ կուրկուտ էին պատրաստում կարևոր օրերին՝ մայիսի 1-ին, 9-ին, Ջատկի տոնին, Ամանորին, մեռելոցին և այլ օրերի, ինչը ցուցիչն է այն բանի, որ կուրկուտը համայնքային և խիստ առանձնահատուկ մշակութային պրակտիկա էր:

Ոչ-նյութական պրակտիկաներից *խաշիլի* պատրաստման համար, որը

37 Ծառուրյան, Հովսեփյան 2021, 315-316:

38 Ծառուրյան, Հովսեփյան 2021, 315-316: Ժենգյալով հացի բաղադրության մեջ մտնում են. վայրի թրթնջուկ, ըվիլյուկ (ավելուկ), պովապորտ (կավաժիպակ), սիմսիմոկ (անմոռուկ), ճրճոճոկ (աստղիկ), կոնանջուկ (ծվծվուկ), ծրտըպաշար (հովվամաղախ), կնձմնձուկ (կերբելուկ), սիբեղն (սիբեխ) և այլ կանաչիներ:

հատկապես տարածված էր Հաղրություն, ցորենն աղում էին, օջախի վրա 4 ժամ եփում, մատուցելիս մեջտեղում փոս անում, յուղ լցնում և պարտադիր կերպով չորաթան ու տխետած ավելացնում³⁹։ Խաշիլի կարևոր բաղադրիչ էր խնոցու թանով պատրաստված չորաթանը⁴⁰, որը ՀՀ-ի քաղաքային և մյուս բնակավայրերում դժվար է պատրաստել։ Տեղահանվածները խաշիլի հետ կապված նույնպես փաստեցին, որ այն համայնքային պրակտիկա էր⁴¹։

Արցախի բնական լանդշաֆտին բնորոշ մեկ այլ պրակտիկա էր նաև *կաճապով ապուրը*, որի հումքը՝ կաճապը, դառնահամ, վայրի, երկար տերևներով բույս էր և աճում էր միայն Հաղրութի դաշտերում, որը չորացնելիս կորցնելով դառնությունը՝ ապուրի մեջ անուշ համ էր ստանում։ Այն բուժիչ հատկություններ ուներ և պատրաստում էին հիմնականում հիվանդներին առողջացնելու նպատակով⁴²։

Հաղրութի հարուստ բնական լանդշաֆտը առանցքային դեր է կատարել *թեյախմության* մշակույթում։ Ընդունված ավանդույթ էր՝ տեղական ուրցով և արցախյան խոտաբույսերով թեյախմությունը։ Թեյախմության հանդեպ սերն էլ ստեղծել էր խորհրդանշական՝ *սամովարի* (ինքնատեղ) մշակույթը, որը գրեթե բոլորն իրենց տներում ունեին։ Թեյախմությունն ավելին էր, քան միայն թեյ խմելը, դա սոցիալական իրադարձություն էր, որը նպաստում էր փոխշփմունքին։ Հաղրութցիները նշել են, որ դեպի տարածքի ուխտատեղիներ՝ Կատարովանք, Հաղրութի Ս. Խաչ վանք, Տողի Ս. Հովհաննես ուխտագնացությունների ժամանակ, հաճախ իրենց հետ տանում էին *սամովարը* (ինքնատեղ) և բնության գրկում վայելում դիզափայտի լանջերից հավաքված բնական խոտաբույսերով թեյը⁴³։ Այս ավանդույթն ընդգծում է արցախցիների և շրջակա միջավայրի խորը կապը, որը Հայաստանում նույն կերպ անհնար է վերարտադրել։

Արցախը հարուստ էր նաև *մեղվաբուծությամբ*, հատկապես Դիզափայտի մեղվափերթակներով, որոնցից շատ տնտեսվարողներ ստանում էին բացառիկ համի մեղր։

Հաղրութի շրջանի խոհանոցի յուրահատուկ ուտեստ էր *պուպոքով* (ընկույզ) *գաթան*, որը հիմնականում պատրաստում էին տոնական օրերին։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե դյուրին է այն պատրաստել նաև Հայաստանում, բայց տեղահանվածները նշում են, թե Հաղրութի պուպոքի համն ուրիշ

39 Լևոն Հակոբյան (78 տ.), Արցախի Հաղրութի շրջանի Տող գյուղից, այժմ՝ ք. Զովունի (Կոտայքի մարզ), հաղորդել է 2023 թ. մայիսին։

40 Չորաթանը պատրաստում էինք խնոցու մեջ կարագը պատրաստելու ժամանակ, երբ յուղը վրայից վերցնում էինք, մնում էր թանը, հետո այն ածում էինք հատուկ պարկի մեջ, մաղով քանում, կլոր կլոր գնդիկներ անում, դրանք ձեռքով սեղմում և դնում դրսում արևի տակ՝ չորացնում, ձմեռը պահում սառը տեղ, հետո ջրի մեջ բացում և ուտում։ Չորաթանով նաև չխջոժ էինք պատրաստում։ Սևակ Վարդանյան (64 տ.), Արցախի Հաղրութի Տող գյուղից, այժմ՝ ք. Գյումրի (Շիրակի մարզ), հաղորդել է 2023 թ. մայիսին։

41 Վարդուհի Սլյան (59 տ.), Արցախի Հաղրութի շրջանի Թաղասեղ գյուղից, այժմ՝ ք. Կապան (Սյունիքի մարզ), հաղորդել է 2023 թ. մայիսին։

42 Զարինե Մարտիրոսյան (48 տ.), Արցախի Հաղրութ քաղաքից, այժմ՝ ք. Երևան, հաղորդել է 2023 թ. մայիսին։

43 Մարինե Քարամյան (59 տ.), Արցախի Հաղրութ քաղաքից, այժմ՝ ք. Երևան, հաղորդել է 2023 թ. ապրիլին։

էր, քանզի տեղի հողի ու ջրից էր սերվում, իսկ բուն գաթան տարբերվում էր մյուս շրջաններից պոպոքի առատությամբ և հաճախ Հաղրութի գաթան «*պոպոքը շար գաթա*» էին անվանում⁴⁴:

Ինչպես տեսանք, Արցախի Հաղրութի շրջանում համայնքային ուտեստների կիրառման պրակտիկայի պահպանումը զգալի մարտահրավերների է բախվում ոչ միայն ռեսուրսների բացակայության, այլև համայնքի մասնատվածության պատճառով: Շատ ավանդական ուտեստների պատրաստումը խորապես միահյուսված էր կոնկրետ օրերի, ժամանակի և արցախյան համայնքային իրադարձությունների՝ արտացոլելով Արցախի մշակութային, ծիսական և բնական ժառանգությունը: Այս ուտեստները՝ ժենգյալով հացը, արցախյան գաթան, խաշիլը, կուրկուտը ևն, ավելին էին, քան պարզապես սնունդ. դրանք համայնքի ինքնության և սոցիալական կառուցվածքի կենսական մասն էին: Դրանք հաճախ պատրաստվում էին փառատոների, կրոնական տոների և այլ նշանակալից հավաքույթների ժամանակ՝ ամրապնդելով սոցիալական կապերը և պահպանելով մշակութային ավանդույթները:

Հաղրութի հուշարձաններ և գերեզմանոցներ մուտքի արգելք

Զինված բախումների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության հարցերով զբաղվող շվեյցարացի տեսաբան Յ. Գրադիսը նշում է, որ ոչ-նյութական ժառանգությունն է, որ կյանք է հաղորդում նյութականին և ապահովում համայնքի գիտելիքների ու մշակութային ինքնության բաղադրիչների փոխանցումը, և հակամարտության ընթացքում հուշարձանի կրած նյութական վնասից զատ՝ տուժում է նաև դրա որոշակի ծեսերի ու ավանդույթների ընդհանրություն ունեցող ամբողջական համայնքը⁴⁵:

ՄԱԿ-ի մշակութային իրավունքի ոլորտում հատուկ զեկուցող Քարինա Բենտոնի խոսքով՝ «*Մշակութային ժառանգության յուրաքանչյուր կարեգործիս ներառում է մյուսի ինչ-որ մաս, և այս երկու կարեգործիսներից որևէ մեկի կորուստը զինված բախումների ընթացքում հանգեցնում է համայնքների ինքնության քայքայմանը*»⁴⁶: Այսինքն՝ նյութականի կորստով կորսվում են ծեսերը, պատմությունները, ավանդույթները: Բռնի տեղահանության հետևանքով մշակույթի իրավունքի կոպիտ խախտում է Արցախի տարածքի պատմամշակութային հուշարձանների հետ հաղորդակցության, «մուտքի» անհնարինությունը, որը զրկում է ժառանգության բարիքներից օգտվելու հնարավորությունից:

Հաշվի առնելով, որ այս հուշարձաններն անբաժանելի են արցախահայերի ինքնությունից, դրանցից օտարումը խորը ճգնաժամ է ստեղծել՝ խաթարելով մարդկանց և մշակութային ժառանգության միջև կապը՝ հանգեցնելով դրանց հետ կապված հիշողության, շարունակականության, գործելակերպի կասեցման: Այսօր Հաղրութի ժողովուրդը չունի մուտքի հնարավորություն

44 Անուշ Սարգսյան (41 տ.), Արցախի Հաղրութի շրջանի Տոդ գյուղից, այժմ՝ ք. Եղվարդ (Կոտայքի մարզ), հաղորդել է 2023 թ. հունիսին:

45 Johannot-Gradis 2015, 1256:

46 UN A/71/317 2016, § 48.

դեպի 400-ից ավելի նյութական նշանակալի պատմամշակութային հուշարձաններ, որոնց զգալի մասը՝ եկեղեցիներ, վանքեր, խաչքարեր, սրբավայրեր, ոչնչացվել են, եկեղեցիների մեծ մասն՝ «աղվանացվել», իսկ ժառանգության մյուս մասը գտնվում է ոչնչացման անմիջական սպառնալիքի տակ:

Համաձայն Արցախի Հանրապետության Հաղորդի շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների 2011 թ. պետական ցուցակի՝ կորսվել է Առաքել, Ազոխ, Այգեստան, Դրախտիկ, Թաղասեռ, Թաղուտ, Խանձաձոր, Խծաբերդ, Ծակուռի, Ծաղկավանք, Հին Թաղեր, Հակակու, Մոխրենես, Մեծ Թաղեր, Մելիքաշեն, Ջրակուս, Սարինշեն, Վանք, Տող, Տումի, Տյաք, Ցոր, Քարագլուխ, Քյուրաթաղ գյուղերի և Հաղորդ քաղաքի նյութական մշակութային ողջ ժառանգությունը, այդ թվում՝ 9-11-րդ դարերի թվագրվող բազմաթիվ խաչքարեր, եկեղեցիներ, կամուրջներ, դամբարաններ, աղբյուրներ, 7-13-րդ դարերի ամրոցներ, գերեզմանոցներ, տապանաքարեր, սրբատեղիներ, մ.թ.ա. 3-րդ հազարամյակի դամբանադաշտեր և դամբանաբլուրներ, ժայռապատկերներ, հուշարձաններ, գյուղատեղիներ և մշակութային ամբողջական լանդշաֆտներ, ինչպես նաև այս արժեքների հետ կապված ոչ-նյութական արժեքները՝ համայնքային կյանքն ու ավանդույթները, գյուղերի ինքնատիպ և եզակի բարբառը, սովորույթներն ու արհեստները, ծեսերն ու պրակտիկաները, որոնք համայնքի կազմաքանդման հետ մեկտեղ վերացման սպառնալիքի տակ են:

Հաղորդից տեղահանվածները նշեցին, որ Հաղորդի շրջանում հատկապես մեծ նշանակություն ունեին սրբավայր համարվող՝ Առաքել գյուղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին, Հաղորդի Կատարո վանքը, Սպիտակ Խաչ վանքը, Հաղորդի Ս. Հարություն եկեղեցին, Տողի Ս. Հովհաննեսը, Տումի Կարմիր Վանքը, Մոխրենեսի Ս. Սարգիսը, Առաքել գյուղի խաչքարերն ու այլ հուշարձաններ: Առանձնահատուկ տեղ ունեին նաև ուխտատեղիները՝ ներառյալ Տյաք գյուղի Տյաքի աղբյուրը (19-րդ դ.), Դիզափայտի աղբյուրները՝ մեղրաղբյուրը, արջաղբյուրը, Աղաբաքի աղբյուրը (մեծ քար էր, որտեղից «սուրբ» ջուր էր հոսում): Սրբավայր էր մոտ 2000 տարեկան *յինջրի* սուրբ ծառը, Ջուխտ պառավածառը (*պուլվաձառ*):

Հատկանշական է, որ այս բոլոր հուշարձանների հետ հաղորդակցումը մշակույթի իրավունքի հիմնարար բաղադրիչ է, իսկ դրանց հետ հաղորդակցման արգելքը՝ մշակույթի իրավունքի կոպիտ խախտում:

Այստեղ առանձնացրել ենք համայնքային ուխտագնացությունների մի քանի սրբավայր, որոնք խորը նշանակություն ունեին:

Դեռևս քրիստոնեության տարածման ամենավաղ շրջանից՝ ուխտատեղի էր Կատարո վանքը, որը փաստագրված է մատենագրական բազմաթիվ աղբյուրներում, և վկայված՝ ուսանողական, պետական և համայնքային բազմամարդ ուխտագնացությունների կազմակերպմամբ⁴⁷: Ուխտագնացությունների ընթացքում դեպի Դիզափայտի բարձունք՝ (ծովի մակերևույթից 2478 մ) ժամ

47 «ԵՊՀ ուսանողները Հաղորդում մեկ շաբաթ ապրել են զինվորական առօրյայով» // Armenpress, 2016, օգոստոսի 3. <https://armenpress.am/hy/article/855993>, դիտումը՝ 01.09.2024:

ու կես ոտաբորիկ քայլելով ուխտագնացության էին գնում գրեթե բոլորը: Շատ տեղահանվածներ Կատարոն «Սրբոց Սուրբ» էին համարում, աստվածային մեծ զորությամբ սրբալայր: Հաղորդեցիների համար սրբազան կանոն էր Կատարո բարձրանալը⁴⁸: Տեղահանվածներն ընդգծում էին Կատարոյի հետ հուզական խորը հոգևոր կապը՝ այն բնութագրելով ոչ միայն որպես եկեղեցի, այլև որպես բուն Արցախի էություն, որի կորստով գերվել են բոլորը⁴⁹: Կատարոյի բարձր դիրքը հնարավորություն էր տալիս տեսնելու ողջ Արցախը, ուստի շատերը նշում էին. «Գնում էինք Կատարո, որ տեսնենք աշխարհը»⁵⁰: Շատերն այն դրախտի էին նմանեցնում և նշում, որ ով երեխա չունե՝ օգտուսին գառը շալակած ոտաբորիկ բարձրանում էր սրբազան դրախտ՝ երեխա ունենալու ուխտով⁵¹:

Կարևոր նշանակություն ուներ նաև Տոդի Գոչավանքը, որտեղ ուխտագնացությունները հաճախակի էին լինում: Հաղորդեցիները Գոչավանք էին գնում թե՛ տոնական, թե՛ սովորական օրերին⁵²: Իսկ Հաղորդի Սպիտակ Խաչ վանքը (13-17 դդ.) տեղահանվածները բնութագրեցին որպես Հաղորդի խորհրդանիշ, որը նաև համայնքային հավաքների և կրոնական արարողությունների կենտրոն էր: «Սպիտակ Խաչ» վանքը Հաղորդի Վանք գյուղի եկեղեցին էր՝ ողջ Հաղորդի ժողովատեղին:

Հետազոտության ընթացքում պարզեցինք նաև, որ Հաղորդի տեղահանված բնակիչների ինքնության կորստյան ամենամեծ խնդիրը կապված էր պապենական գերեզմանոցների կորստի և դրանց հետ զգայական հաղորդակցման անհնարինության հետ, քանզի գերեզմանոցները մի կողմից սերունդների մասին հիշողությունը կենդանի պահելու հնարավորություն էին, իսկ մյուս կողմից՝ ընտանեկան ավանդական դաստիարակության համար առանցքային նշանակության տարրեր, նախնիների մասին հիշողությունը փոխանցելու վկայություններ, ինչպես նաև անհատական հույզերն իրացնելու վայր և հնարավորություն: Գրեթե բոլոր տեղահանվածները հարազատների գերեզմանոցների կորուստը ամենախնդրահարույցն են համարել՝ առանձնացնելով Տոդի Անապատի, Կարմրակուճի, Առաքել գյուղի գերեզմանոցների կարևորությունը՝ որպես սերնդակիցների ապրելու և տարածքի հայկականության վկայություններ:

Մշակութային արժեքների պահպանությամբ զբաղվող հայկական և միջազգային կազմակերպությունների հետազոտությունները վկայում են, որ

48 Վարդան Դալաքյանը (41 տ.), Արցախի Հաղորդի շրջանի Առաքել գյուղից, այժմ՝ ք. Երևան, հաղորդել է 2023 թ. հունիսին:

49 Արմինե Վարդումյան (42 տ.), Արցախի Հաղորդի շրջանի Քարագուլու գյուղից, այժմ՝ ք. Եղեգնաձոր (Վայոց-ձորի մարզ) հաղորդել է տեղահանված 2023 թ. հունիս:

50 Արամ Գաբրիելյան (42 տ.), Արցախի Հաղորդի շրջանի Ցոր գյուղից, այժմ՝ ք. Վայոց-ձոր (Վայոց-ձորի մարզ), հաղորդել է 2023 թ. հունիսին:

51 Տաթև Արզումանյան (41 տ.), Արցախի Հաղորդի շրջանի Տունի գյուղից, այժմ՝ ք. Զովունի (Կոտայքի մարզ), հաղորդել է 2023 թ. ապրիլին:

52 Վարդան Ասրյան (56 տ.), Արցախի Հաղորդի շրջանի Ազոխ գյուղից, այժմ՝ ք. Երևան, հաղորդել է 2023 թ. հունիսին:

Աղբբեջանի կողմից բռնազավթված Հաղբբոթի շրջանի բոլոր բնակավայրերում հայկական գերեզմանատները քանդվում և ոչնչացավում են, իսկ գերեզմանաքարերը օգտագործվում որպես շինանյութ: Հարկ է նշել, որ գերեզմանատների քանդումը, բացի միջազգայնորեն արգելված գործողություն լինելուց, խիստ զգայական խնդիր է, որը մեծ ցավ է պատճառում տեղահանվածներին:

Հաղբբոթի շրջանի տոների հարկադիր կասեցումը

Արցախցիների կյանքում մեծ տեղ են ունեցել տոները, այդ թվում՝ Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը, Աշխատանքի օրը՝ մայիսի 1-ը, Արցախի անկախության օրը՝ սեպտեմբերի 2-ը, Հաղբբոթի օրը՝ օգոստոսի 15-ը, Խարույկի օրը՝ մայիսի 19-ը, ինչպես նաև հիշատակի օրերը, այդ թվում՝ Ցեղասպանության հիշատակի օրը՝ ապրիլի 24-ը, Երկրաշարժի զոհերի հիշատակի օրը՝ դեկտեմբերի 7-ը: Մեծ կարևորություն ունենին նաև եկեղեցական տոները՝ Ս. Ծնունդը, Ս. Զատիկը, Տյառնընդառաջը, Վարդավառը ևն: Հատկանշական է, որ այս տոները խորապես փոխկապակցված են Արցախի մշակութային վայրերի, եկեղեցիների ու հուշարձանների հետ: Շատ հաճախ դրանք ուղեկցվել են հուշարձաններ այցելություններով կամ տոնվել են հենց հուշարձանների տարածքներում: Այդ հուշարձաններից էին՝ Հաղբբոթի Կատարո և Սպիտակ Խաչ վանքերը, Ս. Հարություն եկեղեցին, Տողի Ս. Հովհաննեսը, Տումիի Կարմիր վանքը, Առաքել գյուղի խաչքարերն ու այլ սրբավայրեր:

Տոներից հատկապես կառանձնացնենք նրանք, որոնք միայն Հաղբբոթում են նշվել: Կարևոր էր հատկապես Հաղբբոթին բնորոշ՝ համայնքային ավանդույթ դարձած՝ կորսված Խարույկի օրը: Բոլոր համայնքների սարերի տակ հաղբբոթցիներն այդ օրը խարույկ էին վառում և մրցում, թե ու՛մ խարույկն է ավելի բարձր: Տոնից մեկ շաբաթ առաջ երեկոները ցախ ու անվաղողեր էին գլորում, երգով, պարով տանում դեպի խարույկի վառման տեղը: Տոնին վառված խարույկների շուրջ մեծ ու փոքր հավաքվում էին, խարույկի վրայից ցատկում ու մինչ ուշ գիշեր մնում այնտեղ⁵³:

Հիշատակության է արժանի նաև Հաղբբոթ քաղաքի տոնը՝ օգոստոսի 15-ը, որը նվիրված էր 1992 թ. օգոստոսի 15-ին հաղբբոթցիների՝ *թուրքերի* դեմ ինքնապաշտպանական հերոսական պայքարին և հաղթանակին: Հատկանշական է, որ տոնի առանցքում կրկին մշակութային ժառանգության վայրեր այցելելն էր: Ազատամարտիկներից մեկը նշում է, որ Հաղբբոթի տոնին տղամարդիկ շրջկենտրոնի հուշարձան և հուշահամալիր էին գնում, հետո քաղաքի կենտրոնական հրապարակում տոնախմբություն, պետական միջոցառում էին կազմակերպում, իսկ երեկոյան զինվորականներն էին գալիս և պետական մակարդակով կազմակերպվում էր հյուրասիրություն⁵⁴: Այդ օրը շատերը նաև Կատա-

53 Հաղբբոթից տեղահանված ուսուցիչներ, այժմ՝ ք. Երևան, «Դիզակ Արտ» կենտրոն, հաղորդել են 2023 թ. ապրիլին:

54 Զարուհի Սարգսյան (38 տ.), Արցախի Հաղբբոթ քաղաքից, այժմ՝ ք. Զովունի (Կոտայքի մարզ), հաղորդել է 2023 թ. հունիսին:

րո էին բարձրանում: Տեղահանվածներից մի տղամարդ նշում է, որ Հաղրութի օրը վիրավորները հավաքվում էին Խոռոնաղբյուրում՝ *յրնջրի* ծառի տակ, որը Հաղրութի խորհրդանիշն էր⁵⁵: Պատերազմում գոհված երիտասարդներից մեկի մայրը նշում է, որ 2020 թ. պատերազմից ի վեր Հաղրութի օրն այլևս գոյություն չունի, քանզի այն «նշվում» է Եռաբլուրում՝ որպես պատերազմում Հաղրութից գոհված հերոսների հիշատակի օր⁵⁶:

Հաղրութի արհեստների հարկադիր կասեցումը

Բռնի տեղահանությունը հանգեցրեց ոչ-նյութական մշակութային արհեստագործական պրակտիկաների կասեցմանը: Մեր ուսումնասիրությունները փաստում են, որ Արցախի Հաղրութի շրջանում (հատկապես Մեծ Թաղերում⁵⁷) մինչ պատերազմը կենսունակ էին 19-րդ դարի արհեստները, այդ թվում՝ դարբնագործությունը, տակառագործությունը, բրուտագործությունը, համետագործությունը (թամբի պատրաստում, փականչիություն) ատաղձագործություն, պայտագործությունը, կլայեկչագործությունը (արծնապատում, էմալապատում), գորգագործությունը, փայտագործությունը, հյուսնությունը, որի հումքը տեղական կաղնու փայտն էր: Տակառագործությունը զարգացած էր Տոդում, հումքը՝ Արցախի հաճարի փայտն էր: Իսկ Ասկերանում գործում էր անգամ տակառագործության՝ միջազգային չափանիշներին համապատասխան գինեգործության և կոնյակագործության գործարան՝ Վարանդան:

Հաղրութը հարուստ էր իր գորգագործության և կարպետագործության մշակույթով, որի ավանդական *պրակտիկան* կասեցվեց կրթական կենտրոնների՝ գորգագործության վայրերի բռնազավթման արդյունքում:

Հատկանշական է, որ արհեստների կորստից զատ՝ տեղահանությունը խաթարել է նաև արհեստների մշակութային կրթության բնականոն գործընթացը, ավանդական գիտելիքի ստացումը և փոխանցումը: Մինչ աղբյուրաբանական օկուպացիան՝ Հաղրութի շրջանում գործում էին 26 դպրոց և 6 մանկապարտեզ, որոնցում կրթություն ստացող 2030 աշակերտ տեղահանության հետևանքով զրկվել է կրթության հիմնարար իրավունքից:

Հետազոտության ընթացում որոշ հարցացրույցներ ունենալով՝ նաև դպրոցահասակ երեխաների հետ՝ պարզեցինք, որ տեղահանության հետևանքով նրանց կրթության վրա ազդող բացասական գործոնները բազմաթիվ են եղել՝ կասեցվել են կարպետագործության, գորգագործության, կավագործության, ասեղնագործության, ազգային գուլպա (*շյաթալ*) գործելու՝ շյուղագործության դասընթացները, երաժշտական տարբեր գործիքների՝ քանոնի, դիոլի,

55 Էրիկ Ալավերդյան (56 տ.), Արցախի Հաղրութ քաղաքից, այժմ՝ ք. Երևան, հաղորդել է 2023 թ. հունիսին:

56 Կարո Հայրապետյան (45 տ.), Արցախի Հաղրութ քաղաքից, այժմ՝ ք. Եղեգնաձոր (Վայոց-ձորի մարզ), հաղորդել է 2023 թ. հունիսին:

57 «Արցախի երկրորդ բնակավայրն էր Թաղերը (լեռ երկնքի տակ, թաղ-երկինք), Թաղասեռ և Թաղավարդ գյուղերի անունները նույն արմատով են»։ Լևան Հայրյան (68 տ.), Արցախի Հաղրութի շրջանի Թաղեր գյուղից, այժմ՝ ք. Երևան, հաղորդել է 2023 թ. հունիսին:

շվիի, դուդուկի, թառի ուսուցումը, որոնք ընթանում էին Հադրութի ստեղծագործական մասնակապատանեկան կենտրոնում, Հադրութի և Տոդի արվեստի դպրոցներում և այլ կենտրոններում:

Եզրակացություններ

Սույն հետազոտության արդյունքները փաստել են, որ այսօր ՀՀ տարածքում գտնվող հադրությեցիները անմիջականորեն կրում են տեղահանության բացասական հետևանքները, այդ թվում՝ մշակութային ինքնության համայնքային կյանքի, ընտանեկան սովորույթների և ավանդույթների լիարժեք պահպանության անհնարինությունը, անհատական և հավաքական մշակութային իրավունքի իրացման խոչընդոտները, ինչը ենթադրում է թե՛ մշակութային արժեքներին հաղորդակցման, թե՛ մասնակցության և թե՛ ներդրման հնարավորության բացակայություն:

Կորսված ու վտանգված են Հադրութի պատմական գերեզմանոցներն ու նախնիների մասին հիշողությունները, վտանգի տակ է Հադրութի տարբեր բնակավայրերի բարբառների շարունակականության պահպանությունը: Հադրութի մշակութային համայնքների կազմաքանդման արդյունքում կորսվել են նաև ոչ-նյութական մշակութային ժառանգության ամենաէական դրսևորումները, որոնք կապված են Արցախի բնական լանդշաֆտի և համայնքի հետ:

Տեղահանության ընթացում Հադրութի ժողովուրդը զրկվել է արհեստագործական *սրակտիկան*ները իրացնելու հնարավորությունից՝ ներառյալ գորգագործության, կարպետագործության, թոնրաշինության, տակառագործության, փայտագործության, դարբնության, բրուտագործության ավանդական պրակտիկաները:

Կորսվել են ավանդական տոներն ու մշակութային փառատոները, որոնք կապված էին ոչ-նյութական արժեքների՝ գինու, խաղողի, ժենգյալով հացի, թթվի և այլ արժեքների հետ:

Միջազգային օրենքները փաստում են, որ հարկադիր տեղահանման ազդեցություններից կործանարար է հատկապես խմբի մշակութային իրավունքի խոչընդոտումը և ժառանգության վրա թողած ազդեցությունը, որն անդրադառնում է մասնավորապես անհատի/համայնքի՝ իր իսկ մշակութային ժառանգությանը՝ նյութական և ոչ-նյութական ձևերով մուտք գործելու կարողության և ինքնության շարունակականության պահպանման վրա:

Մշակութային իրավունքի հարգման պարտավորությունը Ադրբեջանից պահանջում է ուղղակի կամ անուղղակի կերպով ձեռնպահ մնալ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի խոչընդոտման ցանկացած միջամտությունից⁵⁸ և ինքնության բացառման խտրականության վերաբերմունքից⁵⁹: Այն երաշխավորում է նաև մշակութային ժառանգությանը և *ինստիտուցիոնալ*

58 UN CESCR, E/C.12/GC/21 2009, § 48.

59 UN General Assembly, 45/158 1990, Article 31.

ծառայություններին «մուտք»-ի հնարավորությունը⁶⁰ և պաշտպանում մշակութային ինքնությունն ազատորեն արտահայտելու գործելակերպն ու ապրելակերպը: Խտրականության, ռասայական կամ կրոնական ստեղծության քարոզչությունն օրենսդրորեն արգելված է «Քաղաքացիական և միջազգային դաշնագրի» 19-րդ, 20-րդ, և «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածներով: Բացի այդ, ՄԱԿ-ի դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետը և 3-րդ հոդվածն արգելում են մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրականացման ցանկացած խտրականություն⁶¹:

Մշակութային իրավունքի հանդեպ հարգանքը նաև մշակութային ժառանգության բոլոր ձևերի պաշտպանության իրավունքն է: *Ժառանգությունը պետք է պահպանվի, զարգանա, հարստացվի և փոխանցվի գալիք սերունդներին՝ որպես մարդկային փորձառության և ձգտումների արդյունք*⁶²: Բայց, ինչպես փաստեցինք, Արցախի մշակութային ժառանգությունը ոչ միայն անխնա ոչնչացվում ու բռնի յուրացվում է, այլև հերքվում է արցախահայերի ստեղծագործ լինելու հանգամանքը: Ուստի կարող ենք պնդել, որ մշակույթի իրավունքի խոչընդոտումով՝ Հաղորդի ժողովրդի հետագա սերունդները զրկված են բնականոն սերնդափոխության, ինքնաճանաչման և զարգացման հնարավորություններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԾԱՏՈՒԹՅԱՆ, ՀՈՎՍԵՓՅԱՆ 2021

Ծառույան Ռ.Ա., Հովսեփյան Ռ.Ա., «Ժենցյալով հացը» 2020 թ. Արցախյան պատերազմի օրերին // Լրաբեր հասարակական գիտությունների, 2021, 2 (662), 305-326:

ДАВИДБЕКОВ 1888

Давидбеков И., Село Гадрут // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Вып. 6, Тифлис, 1888, 153-192.

BRÄUCHLER 2012

Bräuchler B., Intangible Cultural Heritage and Peace Building in Indonesia and East Timor, Routledge, 2012.

DE FEYTER, PARMENTIER 2002

De Feyter K., Parmentier S., Cultural Rights: A Neglected Category of Human Rights // The International Journal of Human Rights, 2002, 6 (1), 23-39.

JOHANNOT-GRADIS 2013

Johannot-Gradis C., Le patrimoine culturel matériel et immatériel: quelle protection en cas de conflit armé?, Geneva, Schulthess, 2013.

KENDALL 2010

Kendall, S., Displacement, Development, and Culture: Understanding the Cultural Rights Implications of Forced Displacement. Human Rights Quarterly, 2010, 32 (2), 356-381.

60 UNESCO 2001, § 8.

61 UN CESCR, E/C.12/GC/21 2009, § 21.

62 UN CESCR, E/C.12/GC/21 2009, § 50.

Զեկույցներ, կոնվենցիաներ, փաստաթղթեր

COUNCIL OF EUROPE 2017

Council of Europe, Recommendation of the Committee of Ministers to member States on the European Cultural Heritage Strategy for the 21st Century. Committee of Ministers, 2017. <https://rm.coe.int/16806f6a03> .

ICC 2021

International Criminal Court, Policy on Cultural Heritage, 2021. <https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/20210614-otp-policy-cultural-heritage-eng.pdf>.

UN UDHR 1948

United Nations' Universal Declaration of Human Rights, New York, 1948. <https://www.legal-tools.org/doc/de5d83/pdf/>.

UN A/HRC/14/36 2010

United Nations, Report of the Special Rapporteur on the Human Rights of Migrants, United Nations Human Rights Council, A/HRC/14/36, 2010. <https://documents.un.org/doc/undoc/gen/g10/124/40/pdf/g1012440.pdf>

UN A/71/317 2016

United Nations, Report on the Intentional Destruction of Cultural Heritage as a Violation of Human Rights. A/71/317, 2016. <https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/a71317-report-intentional-destruction-cultural-heritage-violation-human>.

UN CESCR, E/C.12/GC/21 2009.

United Nations' Committee on Economic, Social and Cultural Rights, General comment no. 21, Right of everyone to take part in cultural life (art. 15, para. 1a of the Covenant on Economic, Social and Cultural Rights), E/C.12/GC/21, 2009. <https://www.refworld.org/legal/general/cescr/2009/en/83710>.

UN General Assembly, A/70/279 2015.

United Nations' General Assembly, Report of the Special Rapporteur on the promotion and protection of human rights and fundamental freedoms while countering terrorism. A/70/279. New York, 2015. <https://documents.un.org/doc/undoc/gen/n15/243/83/pdf/n1524383.pdf>

UN HRC, A/HRC/31/59 2016

United Nations' Human Rights Council, "Report of the Special Rapporteur in the Field of Cultural Rights:" A/HRC/31/59, 2016. <https://digitallibrary.un.org/record/831612?l-n=en&v=pdf>.

UN HRC, 10/23 2010.

United Nations Human Rights Council, Report of the independent expert in the field of cultural rights, Ms. Farida Shaheed, submitted pursuant to resolution 10/23 of the Human Rights Council, 2010. <https://www.right-docs.org/doc/a-hrc-17-38/>

UN HRC, A/HRC/20/26 2012

United Nations' Human Rights Council. "Report of the Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression" A/HRC/20/26, 2012. <https://documents.un.org/doc/undoc/gen/g12/134/91/pdf/g1213491.pdf>

UN HRC, A/HRC/23/34 2013

United Nations' Human Rights Council, "Report of the Special Rapporteur on the rights of persons with disabilities", A/HRC/23/34, Geneva, United Nations Human Rights Council, 2013. <https://documents.un.org/doc/undoc/gen/g13/118/44/pdf/g1311844.pdf>

UN HRC, A/HRC/28/57 2015

United Nations' Human Rights Council, "Report of the Special Rapporteur on the rights to freedom of peaceful assembly and of association" A/HRC/28/57, 2015. <https://docu->

ments.un.org/doc/undoc/gen/g14/249/51/pdf/g1424951.pdf

BENNOUNE 2016

Bennoune Karima, Report of the Special Rapporteur in the Field of Cultural Rights : note / by the Secretariat, 2016, A/HRC/31/59, <https://digitallibrary.un.org/record/831612?ln=en&v=pdf>

UN A/HRC/17/38 2011

United Nations' Human Rights Council, Shaheed Farida. Report of the Independent Expert in the Field of Cultural Rights. Promotion and Protection of All Human Rights, Civil, Political, Economic, Social and Cultural Rights, Including the Right to Development. A/HRC/17/38,, 2011. <https://digitallibrary.un.org/record/831612?ln=en&v=pdf>.

UNESCO 2001

UNESCO, Universal Declaration on Cultural Diversity. Paris, 2001. <https://www.ohchr.org/sites/default/files/diversity.pdf>.

UNESCO 2003

UNESCO, Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Paris, 2003. <https://ich.unesco.org/en/convention>

UNESCO 2024

UNESCO, Culture: Protecting Our Heritage and Fostering Creativity, 2024. <https://www.unesco.org/en/culture>.

UN General Assembly, 45/158 1990

United Nations General Assembly, International Convention on the Protection of the Rights of All Migrant Workers and Members of Their Families. General Assembly resolution 45/158, 1990. https://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_45_158.pdf

UNESCO 2019

UNESCO, Living Heritage and Indigenous Peoples, 2019. <https://ich.unesco.org/doc/src/Brochure-indigenous-people-201904-EN.pdf>.

Armine H. Tigranyan

Lecturer at the Department of Cultural Studies, YSU

RESTRICTIONS ON PARTICIPATION IN THE CULTURAL LIFE OF VIOLENTLY DISPLACED ARMENIANS BY AZERBAIJAN: THE EXAMPLE OF ARTSAKH'S HADRUT REGION

Keywords: Artsakh, Hadrut, right to culture, participation in cultural life, forced displacement, intangible cultural heritage, traditional way of life, war and heritage.

This article has addressed the realization of cultural rights for the Artsakh Armenians forcibly displaced from the Hadrut region as a result of the 44-day war of 2020, focusing on the obstacles to preserving intangible heritage. Approximately 13,000 residents were displaced from Hadrut and its 48 settlements, facing numerous humanitarian and socio-economic challenges, including the deprivation of their fundamental right to culture.

Based on in-depth and focus group interviews conducted in Syunik, Gegharkunik, Vayots Dzor, Kotayk, Shirak marzes of the RA, and Yerevan, as well as a review of international legal and theoretical materials, this research identifies the myriad issues faced by the indigenous people of Hadrut due to the restriction of their cultural rights. By halting the re-creation of intangible cultural values and disrupting

the community life of the Artsakh people, Azerbaijan has directly attacked their cultural rights, damaging collective identity and continuity.

The findings indicate that the displaced Hadrut residents in Armenia experience significant negative consequences, including the inability to fully preserve their cultural identity, community life, and family customs and traditions. They face obstacles to realizing both individual and collective cultural rights, encompassing the ability to communicate, participate in, and contribute to cultural values. The destruction of historical cemeteries and ancestral memories, alongside the threat to the continuity of Hadrut's regional dialects, underscores the gravity of their cultural loss.

The obliteration of Hadrut's cultural communities has also resulted in the loss of significant intangible cultural heritage linked to the natural landscape and community of Artsakh. This includes traditional practices such as making “jengyal” bread, “kurkut”, “khashil”, “kachap soup”, “round gata”, and the distillation of mulberry “doshab”. The destruction of these practices has disrupted community life and posed challenges to preserving cultural integrity.

Holidays, integral to the lifestyle of Hadrut's residents and typically celebrated in conjunction with tangible cultural structures (e.g., Kataro Monastery, Gtchavank, Spitak Khach Monastery), can no longer be observed in their traditional form. The displacement has also halted non-material handicraft practices, including carpet making, tonir baking, barrel making, woodworking, blacksmithing, pottery, and cultural festivals associated with intangible values such as wine and grape traditions, painting, and national traditional games.

International laws, including the Universal Declaration of Human Rights, the UN International Covenant on Economic, Social and Cultural Rights, and various UNE-SO regulations, document that among the effects of forced displacement, the most destructive is the obstruction of a group's cultural rights and the impact on their heritage. This particularly affects the ability of individuals and communities to access and preserve their cultural heritage in both material and non-material forms. Consequently, the obstruction of the right to culture deprives future generations of Hadrut Armenians of the opportunity for self-recognition and development.

Through a comprehensive examination of these issues and an analysis of international norms, the article highlights the urgent need for comprehensive strategies to protect the cultural rights and heritage of displaced populations. Addressing these challenges requires concerted efforts at the international, national, and community levels to ensure the cultural survival and continuity of the displaced Hadrut Armenians. The research underscores that protecting cultural rights is crucial for maintaining collective identity, continuity, and the overall well-being of displaced communities.

Армине Арутюновна Тигранян

Преподаватель кафедры культурологии,

Ереванский государственный университет (ЕГУ)

ОГРАНИЧЕНИЯ НА УЧАСТИЕ В КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ НАСИЛЬСТВЕННО ПЕРЕМЕЩЕННЫХ АРМЯН ИЗ АРЦАХА АЗЕРБАЙДЖАНОМ: ПРИМЕР ГАДРУТА

Ключевые слова: Арцах, Гадрут, право на культуру, участие в культурной жизни, насильственное перемещение, нематериальное культурное наследие, традиционный образ жизни, война.

В статье рассматриваются вопросы реализации культурных прав армян Арцаха, насильно перемещенных из региона Гадрут в результате 44-дневной войны 2020 года, с акцентом на препятствия в сохранении нематериального наследия. Около 13 000 жителей были перемещены из Гадрута и его 48 населенных пунктов, сталкиваясь с многочисленными гуманитарными и социально-экономическими проблемами, включая лишение их фундаментального права на культуру.

На основе углубленных и фокус-групповых интервью, проведенных в Сюникской, Гехаркуникской, Вайоц Дзорской, Котайкой, Ширакой областях РА и Ереване, а также обзора международных правовых и теоретических материалов, данное исследование выявляет множество проблем, с которыми сталкиваются коренные жители Гадрута, в связи с ограничением их культурных прав. Остановив воссоздание нематериальных культурных ценностей и нарушив общественную жизнь народа Арцаха, Азербайджан напрямую атаковал их культурные права, нанеся ущерб коллективной идентичности и преемственности.

Результаты исследования показывают, что перемещенные жители Гадрута в Армении испытывают значительные негативные последствия, включая невозможность полностью сохранить свою культурную идентичность, общественную жизнь и семейные обычаи и традиции. Они сталкиваются с препятствиями в реализации как индивидуальных, так и коллективных культурных прав, охватывающих возможность общения, участия и вклада в культурные ценности. Разрушение исторических кладбищ и воспоминаний о предках, а также угроза преемственности диалектов Гадрута подчеркивают серьезность их культурной утраты.

Уничтожение культурных общин Гадрута также привело к утрате значительного нематериального культурного наследия, связанного с природным ландшафтом и сообществом Арцаха. Это включает традиционные практики, такие как приготовление “жингяла”, “куркута”, “хашила”, “качап-супа”, “круглой гаты” и “тутового дошаба”.

Разрушение этих практик нарушило общественную жизнь и создало трудности в сохранении культурной целостности.

Праздники, являющиеся неотъемлемой частью образа жизни жителей Гадрута и обычно отмечаемые в сочетании с материальными культурными структурами (например, монастырь Катара, Гтчаванк, монастырь Спитак Хач), больше не могут отмечаться в традиционной форме. Перемещение также остановило нематериальные ремесленные практики, включая ковроделие, выпечку в тандыре, бондарное дело, деревообработку, кузнечное дело и гон-

чарное дело, а также культурные фестивали, связанные с нематериальными ценностями, такими как традиции виноградарства и виноделия, живопись и национальные традиционные игры.

Международные законы, включая Всеобщую декларацию прав человека, Международный пакт ООН об экономических, социальных и культурных правах и различные постановления ЮНЕСКО, документируют, что среди последствий принудительного перемещения наиболее разрушительным является препятствие культурным правам группы и влияние на их наследие. Это особенно затрагивает возможность людей и сообществ получать доступ к своему культурному наследию в материальных и нематериальных формах и сохранять его преемственность. Следовательно, препятствие культурным правам лишает будущие поколения армян Гадрута возможности для самопознания и развития.

Комплексное исследование этих проблем и анализ международных норм подчеркивают срочную необходимость разработки стратегий для защиты культурных прав и наследия перемещенных лиц. Решение этих задач требует согласованных усилий на международном, национальном и местном уровнях для обеспечения культурного выживания и преемственности перемещенных жителей Гадрута. Исследование подчеркивает, что защита культурных прав имеет ключевое значение для сохранения коллективной идентичности, преемственности и общего благополучия перемещенных сообществ.

Ներկայացվել է՝ 19.02.2024

գրախոսվել է՝ 14.08.2024

ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Արելի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasc@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ

lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

սլավոնական գիրությունների դոկտոր, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի

Սոցիոլոգիական գիրությունների թեկնածու

ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի*պատմական գիտությունների դոկտոր*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու*կենսաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային
մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ
լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի*սլավոնական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի

ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի*սլավոնական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan

To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan

The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan

Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan

Main issues of Armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan

"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan

Authenticity discourse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan

Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan

Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush

Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan

Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan

Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan

Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cycle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan

The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan

Perceptions of homeland in the Armenian community of Los Angeles 204

Nelli Khachaturyan

Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan

Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян

Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян

Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян

Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян

Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян

“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян

Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян

Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджян

Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш

Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян

Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян

Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян

Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДΙΑСПОРЫ

Рубен Карапетян

Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян

Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян

Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсима Асатрян

Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 248 263

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփեյյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

